


ՏԵՐԻՆԻ ՏՆՈՐԷՆ
Ե. ԹՈՐՈՍՍԻԱՆ
Նամակ կամ որ եւ է
զրու թիւն պէտք է ուղղել առ
ձեռքին ԱՐՇԱԼՈՅՍ քաղաքի
ԳԱԶԻՐԷ (Եգիպտոս)



ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՍՏԱՐ
Տարեկան ողջ դահլիճ 60
Վեցամսեայ » 35
ՕՏԱՐ ԵՐԿՐՈՐԴ
Տարեկան ծրակ 20
Վեցամսեայ » 12

E. TOROSSIAN
Direc.-propr. du journal arménien
ARCHALOUYCE
LE CAIRE (EGYPTE)

Լ Ր Ա Գ Ի Ր
ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ ԿԱՆԻՒԿ
Եւ թղթատարի ծախքը
Խնայարարական վրայ է :
Խնայարարական ուղղուած
գրութիւնք ևս չ'են տրուիր
—*—
ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ
Կանխիկ վճարելի են

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԱՄԱԿ ՄԸ
ՈՒ ՊԱՏԱՍԻԱՆԸ

(Շարն . նախորդ թիւէն եւ վերջ)

Թերեւս քիչ մը շուարէի այս հարցու-
մին առջև — հարցում մը որ թերեւս ամե-
նուտ ալ է — եթէ ինքը, յարգելի բարե-
կամս, իր վերջաբանով ըսած ու խոստո-
վանած չըլլար թէ՛ գործէն ու գործողէն
կախում ունի յաշտութիւնը :

Արդ, կաղաչեմ, ըսէք, կարելի չէ՞ր
որ անմիջապէս գործի ձեռնարկելով, Ս.
Առաջնորդ հայրը, իւր պաշտօնին թարմու-
թեան ազդեցութիւնովը, 3 — 500 ոսկի a-
vance մը ընէր հարուստ ազգայինէ մը կամ
ազգայիններէ, ի հաշիւ վիճակահանութեան
հանուելիք տոմսերու հասոյթին ու անմի-
ջապէս զրկեր հիւանդանոցին հոգաբարձու-
թեան հասցէին, ըսէք, կաղաչեմ կարելի
չէ՞ր ասիկայ :

Բայց դանդաղ շարժելու այն յոռի
ունակութիւնը, որ մեր ազգային նկարա-
գրին մասը կը կազմէ, կարծես, դժբաղ-
դաբար, մեր ազգին անկարելի կընէ շատ
մը բաներ որոնց անվրիպելի յաշտութիւնը
մեր կամքէն ու հաւասարակշռուած տրա-
մադրութեանէն կախում ունի անկասկած.
անցնինք :

Ընդունելով հանդերձ թէ՛ Ազգ. վար-
չութեան հաւանօրէն տալիք — եթէ ցարդ
տուած չէ — բարերար որոշումով, հիւան-
դանոցի հոգաբարձութեան մտատանջու-
թեան մեծագոյն առարկան — որքանոցը
այլուր փոխադրել — վերցած ըլլայ, կրնա՞նք
հանգիստ սրտով վստահ ըլլալ թէ՛ այսու-
հետեւ հիւանդանոցը պիտի կրնայ բարգա-
ւաճօրէն ընթանալ :

Այս հարցումին ջախջախիչ պատասխա-
նը կրնանք գտնել երէկուան անգլիօրէն
ցաւագին իրողութեանը մէջ :

Հիւանդանոցին Պատ. հոգաբարձութիւ-
նը, որուն մէջ հմուտ և փորձառու բժիշկ-
ներ ալ կը գտնուին, չէ՞ր կրնար կանխա-
գուշակել վտանգը, որ անխուսափելիօրէն
պիտի պատահէր, շնորհիւ այն խճողեալ
վիճակին որուն ենթարկուած է եղեր որ-
բանոցը :

Բայց մենք այն ատեն միայն իմացանք

երբ անգլի վտանգը պատահած էր . . . :
Բացայայտօրէն կը տեսնուի ուրեմն թէ՛
նիւթական միջոցներուն անբաւականու-
թենէն, նեղը մնացած հոգաբարձութիւնը
ստիպուած է այնպիսի կարգադրութիւն մը
ընել, որուն աղետալի հետեւանքին տխուր
ականատեսներն ենք ամենքս , այսօր :

Առանց կասկածի տակ զնելու հիւան-
դանոցի Պատ. հոգաբարձութեան խղճամիտ
պարտաճանաչութիւնը, ի հոս թող ներուի
ինձի, իր հասցէին զրկել հետեւեալ դիտո-
ղութիւնը :

Երբ յիմարանոցի բաժինը դառն փորձ
մը տուած էր արդէն, թոքախտը երեւան
հանելով, նոյնպէս խճողեալ վիճակի մը
պատճառաւ, ինչո՞ւ հոգաբարձութեան Պատ.
անդամները զանցառու գտնուեցան օգտուելի
այս տխուր փորձառութեանէն և ինչո՞ւ կան-
խաւ մատնանիչ չ'ըրին այն վտանգը որ Որ.
բանոցին կը սպառնար :

Հանրային գիտակցութիւնը այս տեսակ
պարագաներուն եթէ երբէք ներողամիտ
կը գտնուի, խորունկ անգիտակցութիւն
մը կեղծելով, պատճառն այն է որ չուզէր
սպերախտ ըլլալ իր գործիչներուն հան-
դէպ : Բայց ամեն անգամ որ սիրուած,
յարգուած մարմին մը հանրային ներողա-
մտութեան կարժանանայ, ապահովապէս
բան մը կը կորսնցունէ իր գերակշիռ ար-
ժանիքէն . . . :

Վերագրուանք մեր խնդրին :

Ուրեմն մեր կողմէն եթէ ոչ անմիջա-
կան . գէթ տեսական աշակցութեան մը
պէտք ունի հիւանդանոցը, մոռացում կամ
անգիտացում աններելի անտարբերութիւն
մը պիտի ըլլար մեզի համար :

Չէ՛ . չ'ըսենք որ Պոլիսը իր վէրքե-
րը միայնակ լուայ . աշակցինք անոր, օգ-
նենք անոր, որովհետեւ մեր կողմէն, ըսել
կուզեմ արտասահմանի հայութեան կողմէն
ո՞ և է աշակցութիւն, նիւթական թէ՛ բա-
րոյական, անոր համար կաղաչուրիչ ուժը
պիտի ըլլայ . . . :

Ու յետոյ, չի՞ մոռնանք . հիւանդանո-
ցը մեր մէջ այն միակ Մայր-Հոտտառու-
թիւնն է որ պէտք ունի յարատեւ խնամքի,
գուրգուրանքի : Հո՞ն է, հո՞ն որ կը պա-
տապարուին, կը խնամուին Ազգին տառապ-
եալ, դժբա՞ղք, թշուա՞ռ դասակարգը :
Հո՞ն կը նային աչքելը անկեալ անոք ծե-
րերու, հո՞ն կը նային տխրօրէն զառամեալ
չքաւոր պառաւները . հո՞ն կը նային վերջա-
պէս անտէր, անտիրական մնացած հէգ
պանդուխտ հիւանդները, ետքէն թոքախտ

ըլլալիք գլխահակ որբ-որբուհիները : Հո՞ն
կը նայինք և մենք մեր հոգիին բարձր կա-
րեկցութիւնովը, մեր խանդաղատանքին
ամբողջ եռանդովը :

Խանդավառ սիրով կը փարինք նաև
արտասահմանի մէջ բարձրագոյն վարժարան
մը հիմնելու այնչափ գեղեցիկ ու սքանչելի
գաղափարին զոր ազնիւ բարեկամս կը ներ-
կայացնէ իր նամակովը :

Աւելորդ յոգնութեան մը յանձնառու
եղած պիտի ըլլայի եթէ փորձէի իմ կող-
մէ վեր հանել կենսական կարեւորութիւնը
այս գեղեցիկ գործին որ այնքան յստակօ-
րէն բացատրուած է նամակագիր բարեկա-
միս կողմէն :

Մտածեցէ՛ք անգամ մը . Հիմնե՛լ,
բարձրագոյն վարժարան մը մեր երբեմնի
սքանչելի Մայր-Կեդրոնականի ծրագրով
— կամ աւելի բարձր, եթէ միջոցները նե-
րեն — որուն վրայ գուրգուրաց այն ատեն-
ուան երիտասարդութիւնը և որուն ա՛խը
կը քաշենք ամենքս . այսօր, հիմնել նոյնա-
նման հաստատութիւն մը նրտասահմանի
մէջ, ազատ հողի վրայ զե՛ծ ազտատ կաշ-
կանդումներէ, ջլատիչ պրկումներէ, հե-
ռո՛ւ ապականեալ, խեղդող, մեռցնող
մթնոլորտէն, հիմնել շայս իտեալ հաստա-
տութիւնը, մեր ակամայ տարագիր ու աս-
տանդական կեանքին մէջ է՛ն միջխարական
երեւոյթը՝ պիտի ըլլայ և տեսակ մը քառու-
թիւն այն ամօթալի անշարժութեան, որուն
մէջ օրօրուեցանք ժամանակէ մը ի վեր,
քմահաճօրէն :

Չ'ընկրկինք :

Միացնենք Գթութեան գործը կրթու-
թեան գործին, սրտի ու մտքի համերայն
գործակցութիւն մը հիմնելով և մեր կամ-
քին ամբողջ ուժովը եռանդովը անոնց յա-
շտութեան աշխատինք . այն ատեն ապահով
եղէ՛ք, կրնանք հասնիլ հիւանդանոցին ալ,
Ազքատախնամին ալ, նկեղեցիին ալ, վար-
ժարանին ալ :

Եզրակացութեան մը հասնելու համար
պիտի առաջարկեմ որ փոխանակ զանազան
կարգի տոմսեր նրապարակ հանելու, նորէն
վիճակահանութեան դրութիւնը ի գործ
գրուի, որովհետեւ զանազան կարգի ար-
ժեքաւոր տոմսեր հաստատուելու հանելով նախ
պիտի զրկուինք օտար հասարակութիւննե-
րու օժանդակութենէն . երկրորդ՝ մեր հա-
սարակութեան ազքատիկ գասակարգին ան-
մատչելի պիտի ըլլայ այդ կարգի տոմսակ-
ները, մինչդեռ պարզաւոր տոմսերու

սպառու մը շատ մը դիւրութիւններ ունի, զանոնք դիւրաւ կրնանք սպրդեցնել ամեն անկիւն, ամեն քաղաք թէ հաս, թէ Եւրոպա, թէ Ամերիկա: Կրնանք առանց քաշուելու երկնցնել հայուն ալ, օտարին ալ, հարուստին ալ, աղքատին ալ: Միւս կողմէն մեր այն հարուստները որոնք գիտակցօրէն, ազնուօրէն, առատաձեռնօրէն 1-2-5-10ը սակիւնց տուներ սիրայօժար պիտի վերցնէին, թիւերու խտրութիւնը չէ՛ որ պիտի ընեն՝ երբ անոնք վիճակահանութեան տուներ ըլլան:

Այսպէս իւրաքանչիւր 2 ֆրանգնոց 250-300,000 վիճակահանութեան տուներու զուտ հասոյթը կարծեմ՝ բաւական պիտի ըլլայ մեր նպատակին իրագործման, հիւանդանոցին ալ արժանի բաժին մը հանելով անկից:

Մենք համեստօրէն մեր առաջարկը կը ներկայացնենք. միջոցներ մատնանշելով. խոհական, փորձառու ու հեռատես անձեր թող գործի գլուխ անցնին ու լաւագոյնը անօրինեն: Մենք անոնց կը հետեւինք հաստատ քայլերով:

Ամեն ատենէ աւելի պէտք ունինք գործելու: Ուշադիր ու շրջահայեաց մենք մեզի քաջութիւնք ու լրջօրէն՝ առանց շատ խօսելու առանց զըռելի յաւակնութիւններու, առանց խրոչեցուցիչ յանդգնութիւններու և մանաւանդ առանց սին ու նուաստացուցիչ փառասիրութիւններու, կամքի չ'վհատող, չ'զգեմտուող ուժով գործին նուիրենք մեր ջանքերը, գիտակից ու վստահ:

ՏԻԳՐԱՆ ՀԱՃԸՆԿԱՆ

24 Մարտ 1901 Գահիրէ

Խ Ա Ռ Ն Լ ՈՒ Ր Ե Ր

ՌՈՒՄԱՆԻԱ

Կիսաշխարհիկ կին մը, շատ ծանօթ Պուքարէսթի մէջ, սպաննուած գտնուած է:

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ԵՍ ԸՐԻ ԳՈՒԳ ՄԻ ԸՆԵԳ

(ԲԱՆՏԻ ՅԵՒՏԱՍԿ)

Հայկական վերջին արձակուրդներէն ի վեր, նուազ թուով բացառութիւն կը կազմեն հայերը՝ որ թուրք կառավարութեան բանտ կոչած աւերատունը այցելելու համար, անախորժ հրաւեր մը ընդունած չ'ըլլան:

90-91 թուականներուն դեռ նոր սկսած էին հայուն համար, ջարդ, անպայման բանտարկութիւն, բերդարգելութիւն և քարոք:

93-94 ին Պարսկաստանի սահմաններէն, Վանէն, Կարինէն, Երզնկայէն, Ակնէն, Արարկներէն, Մարզուանէն, և ամեն հայաբնակ քաղաքներէն, հետզհետէ Պոլիս կը հասնէին հայ բանտարկները, իրենց վզէն կրելով շանդալից շղթաներու կօշիչ ծանրութիւնը:

Եստարամիտ բանակալութեան դէմ, ուսած կուրճերէ բարձրացող՝ արդար բողոքներու արձագանքներն էին անոնք, և կառավարութիւնը աւսզակ, ասպատակ. արողոսները կը պատուասաէր անոնց, որով իր կեղեքիչ բարբարոսութիւնը ծածկելու դիւրը ըրած ըլլալ կը կարծէր:

Այդ անորոշ ժամանակներու մէջ վատ պի

տատկանութիւնը յաջողած է ոճրին հեղինակները ձերբակալել:

Ասոնք երկու գայրոցականներ են 16 էն 17 տարեկան, որոց մին Ռուսմանիոյ թագաւորին նախկին թիկնապահ Չօրավար Գանտրանօին որդին է. քննութիւնը կը ցուցնէ թէ՛ այս երկու տղաքները սոսկալի անգթութիւններով կատարած են իրենց ոճիրը, և սպաննուածին գոհարեղէնները ու դրամները միասին տարած են:

ԻՏԱԼԻԱ

ՊՐԷՍՏԻ ԶԱԳՈՒՍՏՆԵՐԸ. — Բրաթօի թաղապետութիւնը Աւսպէրթօ թագաւորին սպաննիչ, Կաէթանօ Պրէսի հագուստները ընդունած է, զանոնք ոճրագործին ընտանիքին յանձնելու համար: Հագուստները Սթէֆանոյի թիարանէն զրկուած են. խիստ դեղեցիկ ու ձեւաւոր հագուստներ են, որոնք Ամերիկայի մէջ պատրաստուած են:

Արքայասպանին եղբայրը որ տեղակալ է Իտալական թնդանօթաձիգ գունդի մը մէջ, մերժած է այդ տիտղոս յիշատակները ընդունել:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

—*—

Տեղական և խառն դատարանաց փաստարան Տ. Ժան Պրուսալի կողմէ հետեւեալ յայտարարութիւնը զրկուած է մեզի հրատարակութիւն:

AVIS

—*—

Le Conseil du Patriarcat Protestant au Caire dans la séance du 14 Mars 1901 présidée par Mr. Mikhael Effendi Abdel Sayed, a nommé à l'unanimité des voix de ses membres la Dame Lucie Mélikian femme de son fils mineur Daniel issu de son union avec feu Sarkis Stephan Mélikian son mari.

Un ILAM CHERI en date du 20 Mars 1901 enregistré au dit Patriarcat

անձի մը՝ թշնամական սեւ յղացու մը գործողութեամբ, և 10-12 հայերու հետ առաջնորդուած էինք ոստիկանական պաշտօնատան յարակից բանար. ողորմելի չէնք մը՝ որ ճարտարագետի մէկ գրողին իսկ չէր կրէր. անձաշակ և վաստակ չէր շարք մը սենեակներէ դատ, ունէր նաև 7 մէթր երկայնութեամբ և 3 մէթր լայնութեամբ արձակ միջոց մը, 4 կոշտ և անտաշ քարէ պատերէ շրջապատուած, և այս կը ծառայէր բանտարկելոց օգուտութեանը:

Մեր բանտարկութեանը երրորդ գիշերը կը բոլորէր. հայոց յատկացեալ սենեակին շնչանդձօքին չ'սովալով, ընկերով մը հեռ վար իջած, և բակը՝ պարզ երկնքին երեցած մասին տակ, ասարտածօրէն կը ճէմէինք՝ դիմաւորելով մէկ պատը յետոյ միւսը, այդ միջոցին մեր միտքը պաշարող մտածումներն էին, հայրենիք, տուն, ծնողք, աքսոր, դատապարտութիւն ևւն. ևւն, Այս ամենը կուգային աւելցնել մեր անորոշ վիճակին առթած արտութեան վրայ վշտի վզացում մ'ալ, բայց յաճախ վայրկեանաբար կը փարտէին անոնք, լսելով և տեսնելով շարագործ բանտարկելոց պոռչառութիւնը, վէճը, և ընդ նրմին կոփամարտութիւնը, որոնք բոկոսն, պատառուն և ամենակեղտոտ հագուստներով դառն վիճակի մէջ կը գոնուէին հոն. և իրենց ապրուստն էր կառավարութեան տուած օրական երկու հացը՝ և անկէ գատ նորեկ և անփորձ բանտարկելոց գրպանի առարկաները, զորս ամենա-

sub N. 1... lio 95 a été délivré à la dite D...

Cabinet de Mr. JEAN BROUSSALI Avocat au Caire

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

—*—

Գահիրէի Բողոքականաց Ազգապետարանին ժողովը, ընդ նախագահութեամբ Միխալ Էֆէնտի Ապուլ Սայէտի, 14 Մարտ 1901 ին կատարած գումարման մէջ, միաձայնութեամբ Խնամակալուհի նշանակած է Տիկին Լուսիա Մէլիքեանը իր անշափահաս Դանիէլ որդւոյն, որ ծնեալ է հանգուցեալ ամուսնոյն Սարգիս Ստեփան Մէլիքեանի կենակցութենէն:

1901 Մարտ 20 թուակիր Իլամը Շէրի մը, որ արձանագրութեան տամարին 95 երեսին մէջ արձանագրուած է 107 թուով, յանձնուած է յիշեալ Տիկնոյ:

Տրուած ի Գահիրէ ֆաստաբան Տիար ԺԱՆ ՊՐՈՒՍԱԼԻ գրասենեակէն:

Հ Ն Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Ս. Բէթէրպուրկ 23 Մարտ. — Թիէն-Ձին պահակ կեցող ֆրանսական գունդը որ մեծ մասամբ Փարիզցիներէ բաղկացած էր, Բէթինէն եկող ուրիշ գունդէ մը փոխանորդուած է:

Վիէննա 23 Մարտ. — Իբէքի Ալպանիացիները լուր ալպանական ցեղապետները կը հրաւիրեն Ալպանիոյ շահերուն վրայ խորհրդակցելու համար:

Ամեն նահանգէ եկող լուրերը ընդհանուր գոհութիւնը կը ծանուցանեն Մաքրուվեցաի երկաթուղւոյ շինութեան համար:

Սէլանիկի հեծեալ ոստիկանութեան պետը, Խայրէտտին Փաշա, մեկնած է Պուլկար ապստամբաց դատուելէն յառաջ եկած յուզումը հանդարտեցնելու համար:

Սէուլ 24 Մարտ. — Քորէական կառա-

ճարպիկ միջոցներով կը փոխադրէին անկէ, և յետոյ ի վաճառ կը հանէին:

Երբ այս անորոշ վիճակին ելից ճամբայ մը դառնելու խորհրդածութիւնները մեր մարքին վրայ կը ծանրանար, յանկարծ նոյն պահուն ձայներ լսուեցան « շուրդ » « զընկ » « շուրդ » « զընկ », շղթաներու ձայներ էին անոնք՝ որ կը գուժէին նոր շղթայակիրներու գալուստը. նոյն միջոցին նոր շղթայակիրներու գալուստը. « պարամ աղա շու հէրբիլէրի իչէրի ալսանա » Պայրամ աղա այդ մարդիկը ներս չ'առնես, « նէ՛ տիր պէ, հիչ բահիթ պըրաբմաւընըղ, շու կեա վուրլարըն քէօքիթի տէ քէսմէսիք քի պիթիթի. զանն էտէրսին քի պիթի կիտէրսէ օնը արքաւընտան պիթիթի »:

« Այս ինչ է ըսու հանգիստ չէք թողուր սա անհաւատներուն արմատն ալ չ'կտրեցինք որ ըմնար, կարծես թէ երբ մէկը կ'երթայ և տեւէն առար հատը բուսնի կոր »:

Եւ վերջապէս Պայրամ աղան երկարատեւ և կեջաւակազմ, բանտապահութեան արհեստին ամեն յատկութիւնները իր վրայ կրող, այդ անզգայ մարդը, սոսկալի յիշոցներով կ'սկսի մէկիկ մէկիկ համբիւլ. և նորեկներուն գլուխներուն ու քամակներուն անխնայ հարուածներ իջեցնելով կը հրձուկէ ու կը գլորէ անոնք մութ և առանձին նկուղներու մէջ, որոնք իրենց ազնուացած նշանակութեամբը « օտախ մախուս (յատուկ սենեակ) կը կոչուէին:

վարութիւնը մաքային վերակացու Պ. Պրատունը ճտեղած է . անդ զիսկան ներկայացուցիչը կը բարձրէ :

Կ. Պօլիս 24 Մարտ . — Սուլթանը պաշտօնապէս հրաւեր ուղղած է Պուլկար կառավարութեան , վերջնականապէս Մակեդոնական գօմիթէն լուծելու համար :

Սոֆիա 26 Մարտ . — Նախարարական ժողովը գումարում է այսօր , երկարօրէն վիճարանած են Պուլկար-Մակեդոնական գօմիթէն լուծման մասին :

Սէլանիկ 26 Մարտ . — Պուլկարներուն դատատանը վերջացած է . վճիռը շուտով պիտի տրուի :

Վիէննա 26 Մարտ . — Լոնտոնէն եկած հեռագիր մը կ'ըսէ թէ Լորտ Սօլզպէրի տկար է :

Ս. Բէթէրսպուրի 26 Մարտ . — Ոստիկանութիւնը հակողութիւնը կրկնապատկած է , պատերազմական նախարարութեան պալատին և նախարարին բնակարանին վրայ :

Իստանուպուլիս քննութիւն մը ցըցուցած է թէ՛ Չարին գէմ եղած դաւադրութեան մէջ , պատերազմական նախարարն ալ մաս ունի եղեր :

Կ. Պօլիս 26 Մարտ . — Զրոյց կը շըրջի թէ Համիլէտտին Նեմէտի մէջ ապստամբած է :

Վիէննա 26 Մարտ . — Քարէն հեռագիր մը կ'ըսէ թէ Տըլարէյ չորավարը Վէննա թէրստօրբի մէջ յաղթուած է Պապինկթըն չորավարէն , և շատ մարդ կորսնցուցած է :

Վիէննա 27 Մարտ . — Հայաստանէն կը ծանուցանեն թէ՛ Գիւրտերու բաղմաթիւ խումբեր Սինաք գիւղը արշաւած են . արշաւողները գիւղը թալլելէ յետոյ զայն հըրոյ ճարակ ըրած են և 500 Հայ Չարղած են . Սինաք գիւղը ամբողջովին կործանած է :

Բէթէրսպուրի 28 Մարտ . — Կը ծանուցանեն թէ Տը Ուէթ Թրանսվալ մտած է 400 կողմակիցներով :

Նի-Եօրք 28 Մարտ . — Ս.Մերիկացիները Ալիւնալտոն գերի բռնած են :

Սէլանիկ 28 Մարտ . — Իստանուպուլիս իր

վճիռը արձակած է Պուլկար ապստամբակներուն գէմ . 19 ապստամբակներէն 3ը մահուան , 7ը ց'կեանս տաժանակիր աշխատութեան դատապարտուած են , իսկ մնացեալները ազատ արձակուած են :

ՏՕՐԹ . ԲՕՐՆՖԷԼՏ

Վ.ԱՅԵԱԼ Վ.ԻԷՆԱՍԻ ՀՍՄԱԼՍԱՐԱՆԷՆ

Նախկին Ներքին Բժիշկ Վիէննայի Գըլխաւոր հիւանդանոցներուն : Մասնագէտ միզանցքային հիւանդութեանց , Գաղղիական ակտի , կոկորդի , քիթի և բերնի հիւանդութեանց :

Ամէն օր հիւանդ կ'ընդունի կէս օրէ առաջ ժամը 10 և 12 , իսկ կէս օրէ վերջը ժամը 3 և 5 , իր տունը Շէրիֆ փաշա փողոց , ԱՂԵՔՍԱՆԴՐՈՒԱ :

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Պ. Պէրթրան . — Պէլճիական բանակին հարկերապետը Պէրթրան , որ վերին եգիպտոս կը գտնուէր , առջի օրերը Գահրէ հասած է , Պահր-էլ-Կազէլէն Մարտ 2ին մեկնած էր :

Պ. Պէրթրան Գօնկօ և վերին Նեղոս գտնուած միջոցին ուսումնասիրած է գետային ճամբով հաղորդակցութիւն հաստատելու միջոցները Գօնկօի և Նեղոսի հետ , որպէսզի այսպէսով երկու երկիրները կարենան իրարու հետ վաճառականութիւն հաստատել :

Զորքը շարժի իրիկուն Պ. Մասքէնս աւոր ի պատիւ հացիկերոյ մը տուած է Պէլճիական Հիւպատոսարանը , որուն ներկայ եղած են պատերազմական նախարարը Ն. Վ. Զօրավար Զոհրապ փաշա և Թիւրնէսըն փաշա . զնդպարտ Ֆէրիկան՝ որ սերտաբը կը ներկայացնէ , և էլկուտ զնդպարտը . նմանապէս ներկայ եղած են Գարթօն ար Վիար , ար Հուլթա և Հալիւնիթ :

սեպհակահուլութիւնն էր . օգուտ չ'կար . համակերպիլ պէտք էր :

Սեզ վիճակուած սենեակը բանտին վերնայարկի արեւելեան կողմը կը գտնուէր , եւ պատին վերը զետեղուած՝ երկաթէ վանդակով երկու պատուհաններ մեզ լոյս կը մատակարարէին : Սենեկապան խոհարարը՝ ց'կեանս գատապարտուած Պարսիկ « Մէհմէտ Ալին » ազնուութեամբ հիւրասիրած էր մեզ . անոր լաւ համարած անկողինները մեր հանգստին համար կը զործածուէր , եւ բանտի ճակատագրային կերակուրը ֆատուրէն ալ մեր սնունդին . իր քաղաքավարութիւնը ստիպած էր մեզ՝ յաճախ որոշեալ գնոյն կրկինը վճարել :

Մուհամմէտ Ալին մէկ փափաք միայն ունէր . անդղիական նաւատորմը Պօլիս ուժբակօծելով , անոր ուժերէն մի քանին բանաբար ու քանդ ընէր , եւ բանտարկեալները ազատ ըլլային . մեծ յոյս կը տածէր թէ այդ օրն ալ մօտաւորապէս պիտի տեսնէր :

Հայ ձերբակալեալներ հետզհետէ կ'ստուարացնէին բանտարկելոց թիւը , նորեկներուն մէջ ճանթներ չ'էին պակսեր , որոնց բաղադրիչ եղած էր նաեւ մտերմներէս երիտասարդ մը . նա մեզ տեղեկութիւններ տուաւ զուրը անցած զարցածներու մասին . պատմեց թէ Ս. Ա. իր նոր ստանձնած ախուր դերով շատ անմեղներ կը ձգէ կառավարութեան ճանկը , իրեն համար շահու աղբիւր կը նկատէ այդ պաշտօնը , զրպարտել , ստել , սպանալ սովորական դարձած են

ԲԱՅՐ-ԷԼ-ՇԷԽԷՆ կիմացնեն թէ էլ վազէրիյէ գիւղէն մարդ մը փորձած է 6 հոգի թունաւորել , անոնց ուտելիքին մէջ զաւիկ (Arcenic) խաւնելով :

Յանցաւորը ձերբակալուած է . թունաւորման պատճառը . դուշակեցէ՛ք եթէ կրնաք . պատճառը այն է եղեր որ , ատոնք մերժած են իրենց աղջիկը մարդուն կիսութեան տալ :

PRO ARMENIA .

Հայապաշտպան սոյն կիսամեայ ֆրանսերէն հանդիսին բաժանորդագրուելու համար յայտնուած փափաքները քաջալերած են մեզ բաւական թուով ունենալ անկէ մեր քով :

Անոնք որ կ'ուզեն քաջալերել Pro Armeniaի նման օգտակար հանդէս մը , կրնան « Արշալոյս » ի Տնօրինութեան դիմել :

Գե՛ղՈՒՆԻ . — Արբունիէն վերջ Գեղուսին կուգայ նոր ապացոյց մը տալ Վիեննայի տպագրութեանց անբաղգատելի գեղեցկութեան վրայ :

Սոյն ընտիր պրակը կը վաճառուի 10 զըշ . ողջ է :

ԽՏԻՎԱԿԱՆ ԳԱՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԱՌԹԻԻ ԿԱԶՄԵԱԼ ԳՕՄԻԹԷԻՆ ԿՈՂՄԷ ԲԱՇԽՈՒԱԾ ՆՇԱՆՆԵՐԸ

Արար ու Եւրոպացի քննիչներու առաջարկութեան վրայ գօմիթէն որոշած է իր 1901 Մարտ 20 ի նստով հեռակեալ վարձատրութիւնները շնորհել :

Արարերէնի Ոսկէ շքադրամ . — Էլ Սայիտ Մօհամմէտ , Թէվֆիք էլ Պէքրի , Մօհամմէտ Նապիֆ Էֆէնտի Իպրահիմ :

Արժամ շքադրամ . — Էֆնի պէյ Նապիֆ , Ահմէտ էֆ . Բէմպի , Տիկին Ալէքսանտրա Ալիէրինօ :

Պատուանիշ . — Ահմէտ Մօհարրէմ , Մօհամմէտ Ապտիւլ Մօթթալէպ , Մօհամմէտ Փարղալի էլ Անսարի , Հասան Համուի , Մօհամմէտ Համուի էլ Նաշար , Ահմէտ էլ Գաշէֆ , Մահուի Ահմէտ Խալիլ :

անոր համար , դրամ կորզելու նպատակաւ եղած դիմում մը երբ ապարդիւն մնայ , վատութիւնը վրայ կը հասնի եւ ենթակաւ կառավարութեան ճանկն է : Վերջապէս նա՛ իր շահատակութեանցը հետեւանօք , կը կարծուէր թէ իր մրտ նախորդներուն սեւ բաղքին պիտի արժանանար :

Այս վերջի տեղեկութիւնները եկան հաստատիլ Ս. Բ. ի վրայ մեր կասկածները , զոր ունեցած էինք արդէն մեր բանտարկութեան ատթիւ :

Օրերը կը յաջորդէին իրարու եւ տակաւին յուսոյ նշույլ մը չ'կար մեզ համար . միւլնոյն ժամանակ գիտէինք որ դուրսէն կը ջանային ամեն գնով ապտել մեզ :

Առաւօտ մը կանուխ ըստ սովորութեան ումանք կը խօսակցէին , ուրիշներ կ'ըլլակի հաճոյքին յանձնուած , եւ կարգ մը անձինք ալ շրջանակ մը բոլորած բաղախաղի մէջ էին . յանկարծ ոստիկաններու ձայներ յուռեցան՝ որ կ'ազդարարէին « պիւլտանմայրն Եօլլամի վար » (տեղերնուզ մի խաղաք խուզարկութիւն կայ) , ապուշ ոստիկաններ չէին գիտեր թէ որոնց հետ պրծ ունէին . ձայներու յաջորդող մէկ ակնթարթի լուրթեան մէջ ի սղաթթիւք , գ'անակները , զմեղները , ստեղները , եւ ինչ որ արգելուած էին , անհետացած էին գետնատարակներու ծակոտիկներէն ներս , եւ ժամէ մը խուզարկութիւնը վերջացած ու դարձեալ անոր յաջորդած էր միւլնոյն զուսանքը :

(Շարուակելի) ԳՈՌԱԿ-ԵՓՐԱՏ

Ո՛վ էին անոնք կամ ուրկէ կը բերուէին , մէկ երկու օրուան հետաքրքրութենէ վերջ , հազիւ կրցինք բանտապահին մէկ թոյլ կողմը գտնել , որմէ հասկցանք թէ՛ անոնց երեքը Մարգուանցի . երկուքը Ահնցի , երկուքը Արաքիերցի եւ հինգը Վանեցիներ էին , որոնք « տին տիւշմէնի » խողովարարներ՝ լեռներու մէջ ձերբակալուած եւ ընդ հակողութեամբ , չղթայակապ Պօլիս բերուած էին . արդարութեան ատենին սոցիւ գատուելու համար :

Մեր բանտարկութեան կարճ միջոցին , կարելի չեղաւ անոնց հետ տեսակցիլ , միայն թէ կըր հարցաքննութեան համար պաշտօնատուն կը փոխադրէին , հազիւ ուրեմի կը դիտէինք անոնց կամխացեալ գէմբերը , ու վերադարձերուն իրենց խցիկներէն գաւազաններու շեփօրը , եւ անլուր չարչարանքներու արձագանքը կը հասնէր մեզ :

Բանաբը կը վխտար նաեւ ստահակ բանտարկեալներով , ասոնց մէջ նշանաւոր էր « չէրքէզ Մուսթաֆա » իր մասնագէտ քսակահատութեան , ու մի օր մեզ այցելող բարեկամի մը բերած նուէրի պատհանութենէն օգտուելու համար , զգուշութեամբ մօտեցած էր , եւ երբ նրուէրը գրպանս կը զետեղէր , երկվայրկեանի մէջ կը փոխապրուէր « չէրքէզ Մուսթաֆա » ի գրպանը , ուրկէ այլեւս ինձ վերագառնալու սահմանուած չէր . հետեւեալ ժամուն ներկայ կը գտնուէինք աճուրդի՝ մը որուն նիւթը մեր հին

Թուրքերէն
 Պատուանիշ . — Բեա՛հիլ
 Բօրթերէն
 Պատուանիշ . — Վահալի պէյ .
 Օտար չեղաւ .
 Ուկէ նշան . — Պ . Լրկարան (Ֆրանսա-
 ցի և Կէլթիներ (Իերանացի) .
 Արծաթ նշան . — Մանանիբի (Ֆրանսա-
 ցի) , Լօրէնցօ Բօճէթթի (Իտալացի) , Իր-
 րիգոր Շահնուհի (Հայ) Սիօնական ընկե-
 ռութիւն (Եփրայեբէն) .
 Պատուանիշ . — Կէմար , Շօլէյ , Էտտէ ,
 Մօրիս սը Լակարան , Ֆահէմ Պաքում (Ֆր-
 անսացի) , Էփանկէլիտիս (Յոյն) Բայլնէ-
 րօս (Գերմանացի) .
 ԹԱՆՕԹ . — Այդ ոտանաւորները սակե-
 մատենին մէջ պիտի հրատարակուին :

ՆԱՄԱԿ ՓԱՐԻՁԷՆ

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԳՊՐՈՅՆԵՐԸ ՕՏԱՐ ԵՐԿՐՆԵ-
 ՐՈՒ ՄԷՁ . — Ռայխստակին ներկայացուած
 հաշուեցուցակէ մը կ'երևի որ Գերմանիա
 օտար երկիրներու մէջ բացած է 125 վար-
 ժարան . որոց ամենքն ալ կայտերական
 գանձարանէն որոշ գումարներ կ'ստանան :

Ամենամեծ գրամական օգնութիւնը կը
 լինի Կ . Պօլսոյ գերմանական գալոցին , ո-
 րքն 30,000 Մարքէ աւելի է : Կալացի գըզ-
 րոցին կը տրուի 11203 Մարք : Անվէրսայի
 գալոցին՝ 10,030 , Պրուքսէլինին 10,000 ,
 Պուքարտի շորս գերմանական գալոցին-
 րուն կը տրուի 10,000 Մարք : Պրաղիլիոյ
 մէջ 20 գերմանական գալոցներ նոյնպէս
 գրամ կ'ստանան : Շիլի մէջ 12 , անգլիա-
 կան գաղթականութեանց մէջ 12 , Ռու-
 մանիոյ մէջ 12 , Եգիպտոսի մէջ 12 և Թը-
 րանսվալի մէջ 2 գալոցներ գրամական օգ-
 նութիւն կ'ստանան :

ԱՆՀԱՐԱՋԱՏ ՁԱԽԱԿՆԵՐՈՒ ԲԱՆԱԿՈՒ-
 ԹԻՒՆԸ ՁԱՆԱՋԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒ ՄԷՁ . — Պը-
 րանսայի մէջ բարեբրու չափազանց աղա-
 տութիւն լինելով , ընական պիտի լինէր
 կարծել թէ՛ ֆրանսայի մէջ անհարազատ
 զաւակները աւելի շատ պիտի լինին քան թէ
 ուրիշ երկիրներու մէջ : Բայց այդ կարծի-
 քը ուղիղ չ'պիտի լինէր՝ վստիկ ֆրանսան
 միայն վեցերորդ տեղը կը բռնէ : Ահա ա-
 ւասիկ ցուցակ մը որ բաւականին հետաքը-
 թիւ է և որ եղած է 0/0 ի հաշուով :

Աւստրիա	13,7	»	»
Փորթուկալ	18,1	»	»
Շուէտ	10,4	»	»
Գերմանիա	9,2	»	»
Պէլճիգա	9,0	»	»
Ֆրանսա	8,8	»	»
Հունգարիա	8,3	»	»
Սկովտիա	7,6	»	»
Իտալիա	7,7	»	»
Ֆինլանտիա	6,5	»	»
Անգլիա	4,8	»	»
Ջուրջերիա	4,0	»	»
Հոլանտա	3,5	»	»
Իռլանտա	2,7	»	»
Ռուսիա	2,7	»	»
Յունաստան	1,5	»	»
Սերպիա	0,4	»	»

Մ . Ս . ԴԱԻԹ ԲԷՏ

Տպագրութիւն ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ

ՏՆԻ ՄԻՉՈՒԱԼ ԼԱՅՑ
ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍՏԸ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ
 ԵՐԱՇԽԱՌՈՐԵԱԼ ԴՐԱՄԱԿՈՒԻ 1 ՄԻԼԵԱՐ 563 ՄԻԼՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժ-
 նէ ամենէն աւելի շահարածիները :
 Ապահովագրեալներուն արդէն
 վճարած է կամ ի նպաստ իրենց գու-
 մարած է 3 ՄԻԼԵԱՐ 480 ՄԻԼԻՈՆ՝
 որ գրեթէ Խոյսարհի ուրիշ օրէ է ըն-
 կերութենէ մէկ միլեար աւելի է :
 Ս . ԼԷՕՆԱՐ ընդհանուր ներկա-
 յադուցիչ ի Գահրէ

Այլապէս մէջ գանուող ուրիշ օր
 և է ընկերութենէ աւելի երաշխա-
 ւորութիւններ , ընդարձակ գործառ-
 նութիւններ և հրապարակի վրայ ա-
 ւելի ապահովագրութիւններ ունի և
 աւելի ապահովագրին կը գանձէ :

ԱԼԷԲՍԻՍ ԼԱՎԻՉՈՆ գլխաւոր
 գործակատար , Պուրքսանդրիա :

ԸՆԴՀԱՆՈՐԸ ԳՆՆԵՁ ՊԱՏՈՒՐԱԿ
 — ԳԵՈՐԳ ԵԿԱՒՕՑ —

Ս Ի Ն Կ Ե Ր
ԸՆԴՀԱՆՈՐ ԵՒ ԱՐԱԿ ՆԵՐԿԱՑԱՑՈՒՅԻՉ Ժ . ՆԱՅՏԼԻՆԿԻՐ

Պալաքի փողոց . Խաղէտարի սեփականութիւն , Պրիսթօլ Օթէլի ճիշդ դիմաց ,
 Գաֆէ Տը Լա Պուրտի կից :

Հին եւ նոր ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ԲՈՂՈՐ ԲԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՁ 6500 ՄԱՍՆԱՃԻՂԵՐ ՈՒՆԻ

Այլապէս ամենէն լաւագոյն կարի մեքենաները Սինկերմէն երն են և ասոնցմէ մինչև ցաւք
 17,000,000 ծախուած է :


400 և աւելի վիայականներով եւ մեքայնեով վարձարուած , երաշխաւորուող մեքենաներ ,

ԱՄԵՆԷՆ ՄԵՆ ՎԱՐՉԱՏՐՈՒԹԻՒՆԸ
ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ
 Փարիզի 1900 ի Տիեզերական արուեստաներիսին մէջ ստացած է :

ՀԱԳՐԱՅԹԻՉ ԲՐՈՒՄԻՈՑ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԶԱՅՐԱՅԹԻՉ ԱՆԳՂԻՈՅ-ԿԱՅՍԵՐԱԿԱՆ
 ԱՐԲՈՒՆԻՔԻՆ ԶԱՅՐԱՅԹԻՉ ԱՆԳՂԻՈՅ-ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԵՍՑ
 ՀԱՅԹԱՅԹԻՉ Ն . Բ . ԽՏԻՎԱԿԱՆ ՏԱՆ

Կեղծերէն զգուշանալ ,
 ուշադրութիւն դարձնել իւ-
 րաքանչիւր մեքենայի վրայ
 ՍԻՆԿԵՐ Ի յասկանջիւն :

ԳԻՆ ՉԱՓԱՌՈՐ



Չրի դասեր և նորոգու-
 թիւններ , ՍԻՆԿԵՐ մեքենա-
 յից համար , յաճախորդաց
 տուններուն մէջ :

Վճարմանց Դիւրութիւն
 Փոխանակութիւններն մեքենայից
 եւ նորոգութիւն ամեն կարելի
 Մեքենայից

ՄԱՆԿԱՐԱՐՉ
ՏԻՎԻՆ ՍՈՍԻԿ ԱՋԳԱՊԵՏԵԱՆ
 Ետրա-Ապսիւղ-Ազիզ

Վերջերս իւր բնակութիւնը Խուրուսֆիլէն
 փոխադրած է Ետրա Ապսիւղ Ազիզ , Ալի փաշա
 Շէրիֆի պարտիզին դիմաց , Ահմէա պէյ Ապ-
 տիւլ Բազզիի 20 թիւ սեփականութեան մէջ :
 Տիկին Սօֆիլի Ազգապետեան իւր փորձա-
 ութեամբ եւ յարգաւորութեամբ արդէն ծանօթ
 ըլլալով գահիւրեանակ ազգայնոց եւ նոյն իսկ
 օտարաց , աւելորդ կը համարուի զայն յանձնա-
 րարել իւր խնամօքը պէտք ունեցողներուն :
 Վկայեալ աղքատներուն համար ձրի
 գարմանում :

ՀՆԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ
 ՈՒՐԲԱԹ 29 ՄԱՐՏ 1901

8785	770	5502	4710	427	8660
1178	6293	6539	486	8579	1357
5494	380	3496	544	1319	6547
224	2570	4849	2920	3049	2959
		4648	9741	537	

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ
 ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ
«ԱՐՇԱԼՈՅՍԻ»
 ՀԻՄՆԵԱԼ 1 ՄԱՅԻՍ 1900

ՇԱՐԻԱ ԱՊՏԻԼ ԱՋԻՁԻ ՍԿԻՋԸ
 Օտեսիյի ղեկարանին ղիւնացի փողոցին մէջ .

Փողովրդական Տպարանին մէջ կը պատ-
 րաստուին .

Այցեխարտեր , Երջարտարաններ , Գիրքեր ,
 Հրատարակութիւններ , Մանկապարտեաներ ,
 Կանոնագիրներ , Տոմարներ և այլ և այլ տպա-
 րանի վերաբերեալ յանձնարարութիւններ
 կը վաճառուին հետեւեալ գրքերն .

1. ԲՆԱՇԽԱՐՀԻԿ ԲԱՌԱՐԱՆԻ Ի Ա . Լ . Բ .
 պրակներն :
2. ՈՐԲՈՒՆԻ որոյ ի Թուրքիա մուտքը ,
 ինչպէս կը լսենք , արգելուած է :
3. ՀԱՌԱՔԱՇՈՅ Հայոց Փողովրդական
 երգերու :